

## GF-120 NF Naturalyte-ի® կապակցությամբ առողջությանը վերաբերող հարցեր ու պատասխաններ

Պատրաստված է Կալիֆորնիայի Շրջակա միջավայրի պաշտպանության գործակալության (CalEPA) Բնապահպանական առողջության վտանգների գնահատման գրասենյակի կողմից



### Հ. Ի՞նչ է GF-120 NF Naturalyte-ը:®

Պ. GF-120 NF Naturalyte-ը® միջատասպան է, որը պարունակում է սպինոզադ ակտիվ բաղադրիչ և սպիտակուցի խայտ՝ թիրախային միջատներին գրավելու համար: Քանի որ սպինոզադն արտադրվում է բնական պայմաններում հանդիպող բակտերիայի՝ *Saccaropolyspora spinosa*-ի կողմից, այն համարվում է «ոչ-սինթետիկ» կամ օրգանական միջատասպան: GF-120 NF Naturalyte-ն® օգտագործվում է Կալիֆորնիայի Սննդի և գյուղատնտեսության վարչության (CDFA) կողմից՝ քաղաքային տարածքներում ոչ-բնիկ միջատների ներկայությունը վերահսկելու նպատակով: Այդ նպատակով օգտագործվելիս, GF-120 NF Naturalyte-ը® ձեռքով սփռվում է հյուրընկալ բույսերի վերգետնյա սաղարթին՝ երեխաներից ու ընտանի կենդանիներից հեռու: (Սպինոզադ. օրգանական միջատասպան էկոտոիկ ճանճերի դեմ տեսանյութը դիտեք <https://www.cdfa.ca.gov/plant/videos/spinosad/> կայքում):

### Հ. Ինչպե՞ս է գործում սպինոզադ ակտիվ բաղադրիչը:

Պ. Սպինոզադ կլանելիս, կամ դրա հետ շփվելիս միջատի նյարդերը գրգռվում ու գերխթանվում են: Սա միջատին կարող է սպանել: Փորձերը ցույց են տալիս, որ սպինոզադը թույլ ազդեցություն ունի կաթնասունների նյարդային համակարգի վրա՝ նույնիսկ բարձր դոզայի դեպքում:

### Հ. Ինչպե՞ս են դաշնային գործակալությունները դասակարգում սպինոզադի առողջական հետևանքներն ու ռիսկերը:

Պ. Սպինոզադը համապատասխանում է «նվազեցված ռիսկայնության միջատասպանների» համար ԱՄՆ Շրջակա միջավայրի պաշտպանության գործակալության պահանջներին, որովհետև այն մարդու առողջության վրա թույլ ազդեցություն է ցուցաբերել: ԱՄՆ Գյուղատնտեսության նախարարությունը (USDA) արտոնում է սպինոզադի օրգանական օգտագործումը, քանի որ այն ոչ-սինթետիկ է և ճանաչված՝ իբրև օրգանական պրակտիկայի չափանիշներին համապատասխանող:

### Հ. Ի՞նչ ազդեցություն ունի սպինոզադը մարդու առողջության վրա:

Պ. Եթե GF-120 NF Naturalyte-ը® կիրառվի ըստ պիտակին նկարագրված ցուցման, ապա մարդու առողջության համար սպինոզադը շատ թույլ ռիսկ է ներկայացնում: Մաշկին սպինոզադի բարձր դոզաների կիրառումը կաթնասունների համար խիստ ցածր թունայնություն է գրանցել: Ուսումնասիրությունների արդյունքում մուտացիայի, ԴՆԹ-ի որևէ այլ վնասի, կամ քաղցկեղի որևէ ապացույց չի գրանցվել: Բարձր խտությամբ կիրառվելիս այն կարող է աչքի և մաշկի ժամանակավոր գրգռվածություն առաջ բերել: Փորձակենդանիների վրա մաշկի զգայունակացման ռեակցիա, օրինակ՝ ալերգիկ կոնտակտային դերմատիտ, այն չի առաջացնում:

### Հ. Ի՞նչ գիտենք GF-120 NF Naturalyte-ի® իներտ բաղադրիչների մասին:

Պ. Օրգանական կիրառման համար թույլատրված մյուս նյութերի պես, GF-120 NF Naturalyte-ի® իներտ բաղադրիչները ևս USDA-ի «նվազագույն մտահոգություն ներկայացնող իներտների» ցանկից են: Որոշ իներտ բաղադրիչներ, լաբորատորային կենդանիների վրա բարձր խտությամբ փորձարկվելիս, աչքի կամ մաշկի թեթև գրգռվածություն են առաջ բերել: Իներտ ոչ մի բաղադրիչ քաղցկեղի առաջացման նշան ցույց չի տվել: Ակնկալվում է, որ իներտ բաղադրիչներին երևակումը կլինի շատ թույլ:

**Հ. Բույսերի վրա կիրառելուց հետո GF-120 NF Naturalyte-ի® հետ ի՞նչ է տեղի ունենում:**

Պ. Ակտիվ բաղադրիչի՝ սպինդոզադի մեծ մասը մնում է սաղարթի մակերեսին: Սպինդոզադի փոքր քանակություն կարող է թափանցել տերևների մեջ, սակայն բույսի այլ հատվածներ այն չի տարածվում: Սաղարթին միջատասպան կիրառելու արդյունքում սպինդոզադը կարող է նստել նաև գետնին: Սպինդոզադը մնում է հողածածկույթի վերին շերտում և շրջակա միջավայրում տևական ներկայություն չի պահում: Սաղարթին ու գետնին մնացած նստվածքն արևի լույսից կամ բակտերիաներից քայքայվում է մի քանի օրվա կամ շաբաթվա ընթացքում:

**Հ. Ի՞նչ կարելի է անել GF-120 NF Naturalyte® կիրառված տեղանքում սեփական երևակումը նվազեցնելու համար:**

Պ. Նյութի կիրառումից անմիջապես հետո նյութով մշակված ծառերի կամ թփերի մոտակայքում բակային աշխատանք մի՛ կատարեք և երեխաներին թույլ մի՛ տվեք խաղալ: Մշակումից հետո հոսող ջրով մաքրեք դրսի խաղահրապարակները: Նյութի հետ շփման դեպքում լվացեք մաշկն ու զգեստները: Հետևեք CDFA-ի հրահանգներին:

**Հ. Կարելի՞ է, արդյոք, GF-120 NF Naturalyte-ով® մշակված ծառերից ու թփերից միրգ ու բանջարեղեն ուտել:**

Պ. Այո, GF-120 NF Naturalyte-ը® չորանալուց հետո (կիրառումից 4 ժամ անց) մթերքը կարելի է քաղել և ուտել: Նախքան ուտելը կամ եփելն այն պետք է լվանալ:

**Հ. Ի՞նչ անել, եթե GF-120 NF Naturalyte-ի® կիրառումից հետո լավ չեք զգում:**

Պ. Չանգահարեք Կալիֆորնիայի Թունավորման վերահսկման համակարգի (California Poison Control System) թեժ գծին՝ (800) 222-1222, կամ դիմեք Ձեր բժշկին:

---

Հավելյալ տեղեկությունների համար դիմեք.

Invasive Species Program  
Office of Environmental Health Hazard Assessment  
California Environmental Protection Agency

1001 I Street, P.O. Box 4010  
Sacramento, CA 95812  
Հեռ. (916) 327-7319

1515 Clay St., 16<sup>th</sup> Floor  
Oakland, CA 94612  
(510) 622-3170

Էլ. փոստ՝ [pesticides@oehha.ca.gov](mailto:pesticides@oehha.ca.gov)

Դեկտեմբեր 2016